



ՏԱՃԱՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏԵՕՐԷՆ-ԽՄԱՍԳԻՐ

ՋԱՐԲԱՅԻ ՔԱՀԱՆԱՅ ԿԷՋԻՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 21 ՕԳՈՍՏՈՍ 1910

ԹԻԻ 21

“ՏԱՃԱՐ”, Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ համար տարեկան	35 դրուք
Գաւառաց համար տարեկան	40 »
Արասահմանի համար տարեկան	10 ֆրանկ
Զեռէ կը ծախուի պրակը	40 փարա

Բաժանորդագիրները կանխիկ են

«ՏԱՃԱՐ»-ի թէ վարչական և թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է դիմել առ
Զարմայր Քահանայ Կեզիւրեան, Կ. Պոլիս, Պեիքիաւ, Հայոց եկեղեցի

در سعادتہ بشکطاشده ارمی کلیسائندہ (داجار) فزتمی مدیری پاپاس زارمار

Rev. Père Zarmaïr Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache Eglise Arménienne

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՋՈՒՄԱՆ

Ջարմաքըրլար, Ցակորեան խան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Գնէլ Ծ. Վրդ. Գալէմբարեան
2. Տ. Տիրայր Ծ. Վրդ. Մարգարեան
3. Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Դուրեան
4. Տ. Սուրէն Վրդ. Գալէմբարեան
5. Տ. Հմայեակ Բնյ. Էքէրճեան
6. Տ. Արքատակէս Բնյ. Հիսարլեան
7. Տ. Զարմայր Բնյ. Կէղիւրեան

ՎԱՐՁԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Դուրեան
2. Տ. Հմայեակ Բնյ. Էքէրճեան
3. Տ. Խորէն Բնյ. Յարութիւնեան
4. Տ. Սուքիաս Բնյ. Պալլաճեան
5. Տ. Պողոս Բնյ. Պէյաղճեան
6. Տ. Խորէն Բնյ. Վարդանեան
7. Տ. Գէորգ Բնյ. Անանեան
8. Տ. Գրիգոր Բնյ. Ճէպէճեան

ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԵՐ

«ՏԱՃԱՐ» ԿՐՕՆԱԹԵՐԹԻ

ԱԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ.—Առաջն. Փոխանորդ Տ. Արսէն Բնյ. Դերձակեան
ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ.—Տ. Ռուբէն Բնյ. Գա-
բիկեան
ԱՄԵՐԻԿԱ.—Առաջն. Փոխանորդ Տ. Պո-
ղոս Վրդ. Գալթեանեան
ԱՅԼԹԱՊ.—Տ. Գարեգին Բնյ. Պողարեան
ԱՖԻՕՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ.—Տ. Սալատուր
Ա. Բնյ. Տօնէլեան
ԲԱԲԵՐԴ.—Մ. Սանտեան էֆ.
ԳԱՂԱՏԻԱ.—Առաջնորդ Տ. Բաբգէն Ծ.
Վրդ. Կիւլէսէրեան
ԳԱՀԻՐԷ.—Առաջնորդ Տ. Մկրտիչ Ծ.
Վրդ. Աղաւնուհի
ԵԴԵՍԻԱ.—Բ. Թիւրաքեան էֆ.
ԵՍՁՂԱՏ.—Առաջնորդ Տ. Խորէն Ծ. Վրդ.
Դիմաքեան
ԵՐԶՆԿԱ.—Առաջնորդ Տ. Երուանդ Վրդ.
Փէրտաճեան
ԶՄԻՒՌԻՆԻԱ.—Տ. Յարութիւն Բնյ. Տ.
Սարգիսեան
ԷՍԿԻՇԷՀԻՐ.—Տ. Գալուստ Բնյ. Տ.
Գալուստեան
ԽԱՐԲԵՐԴ.—Առաջն. Տեղապահ Տ. Գէորգ
Ծ. Վրդ. Ասլանեան
ԿԱՐԻՆ.—Առաջնորդ Տ. Սմբատ Ծ. Վրդ.
Սաւաթեան
ԿԻՐԱՍՈՆ.—Մարտոն էֆ. Թոքատլեան
ԿԻՒՄԻՒԼՃԻՆԷ.—Տ. Ներսէս Բնյ. Նշան-
եան
ՀԱԼԷՊ.—Առաջն. Տեղապահ Տ. Շահէ
Վրդ. Գասպարեան
ՄԱՆԶԷՍԹԸՐ.—Առաջնորդ Տ. Գէորգ Ս.
Եպիսկ. Իւթիւճեան
ՄԱՐԱՇ.—Տ. Հմայեակ Բնյ. Վարժա-
պետեան
ՄԱՐՁՈՒԱՆ.—Յակոբ էֆ. Սրապեան
ՆԻԿՈՄԻԴԻԱ.—Տ. Ռակի Բնյ. Պրպիւրեան

ՆՈՐ ԶՈՒՂԱ.—Առաջն. Փոխանորդ Տ.
Բազարատ Վրդ. Վարդապարեան
Շ. ԳԱՐԱՀԻՍԱՐ.—Տ. Նաթան Բնյ.
Տառեան
ՈՒՇԱՔ.—Կարապետ էֆ. Բէհեանեան
ՊԱՆՏՐՄԱ.—ՊԱԼԸՔԻՍԻՐ.—Առաջնորդ Տ.
Կարապետ Ծ. Վրդ. Մաղլումեան
ՊԱՂԱՍԱ.—Առաջնորդ Տ. Մովսէս Ս.
Եպիսկ. Կէօմրիւքեան
ՊԱՅՐԱ.—Կարապետ էֆ. Բէրթմէնեան
ՊԱՐՏԻԶԱԿ.—Յովհաննէս էֆ. Տ. Կա-
րապետեան
ՊԷՅՐՈՒԹ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Եղե-
կիլ Վրդ.
ՊՐՈՒՍԱ.—Առաջնորդ Տ. Յովհաննէս Ս.
Եպիսկ. Արշարունի
ՌՈՒՍՃՈՒՔ.—Տ. Մկրտիչ Բնյ. Մըրժ-
նիկեան
ՌՈՏՈՒԹ.—Առաջն. Փոխանորդ Տ. Բար-
թոլ Ա. Բնյ. Թաղմեան
ՍԱՄՍՈՆ.—Առաջնորդ Տ. Սահակ Ծ. Վ.
Օտապալեան
ՍԵՔԱՍՏԻԱ.—Առաջն. Փոխանորդ Տ.
Թէոփիլէ Բնյ. Օտապալեան
ՍԵԼԱՆԻԿ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-
պետ Բնյ. Թուրմանեան
ՍՕՖԻԱ.—Տ. Մեսրոպ Բնյ. Տ. Մեսրոպ-
եան
ՏԱՐՏԱՆԷԼ.—Տ. Դիոնիսիոս Բնյ. Տրէգ-
եան
ՏԷՏԷ-ԱՂԱՃ.—Տ. Գարեգին Բնյ. Տէօփ-
լէթեան
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ.—Դաւիթ էֆ. Մովսէս-
եան
ՏԻՄԷԹՕԳԱ.—Տ. Գէորգ Բնյ. Թէրզեան
ՏՓՂԻՍ.—Տ. Առաքելեան
ՓԱՐԻԶ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Վառժա-
պետ Բնյ. Բիպարեան
ՔԷՍՍԹԷՆՃԷ.—Տ. Մատթէոս Բնյ. Մա-
նիկեան
ՔՂԻ.—Առաջն. Տեղապահ Տ. Պսակ Վրդ.
ՖԻԼԻՊԻ.—Տ. Տաճատ Բնյ. Դերձակեան
ՖՐԷՉՆՈ.—Յակոբ էֆ. Նշանեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 21 ՕԳՈՍՏՈՍ 1910

ԹԻԻ 21

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ. — ԽՄԲԱԳՐԱԿԱՆ, «Մեղեդոց»ի տպաւորութիւններ, ՋԱՐՄԱՅՐ ՔԱՅԱՆԱՅ. — Օրէնքը, ԳՆԷԼ Ծ. Վ. ԳԱԼԵՄՔԵԱՐԵԱՆ. — Ազգ. Եկեղեցւոյ բարեկարգութեան խնդիրը, ՎԱՐԴԱՆ Ծ. Վ. ԳԱՍՊԱՐԵԱՆ. — ԿՐՕՆԱ. — ՊԱՏՄԱՆԱՆ, Ստեփանոս Սիւնեցի (շար.) ԵՂԵԷ Վ. ԽԱՅԵՐԵԱՆ. — ՕՏԱՐ ԷՋԵՐ, Հոգի եւ Նիւթ (Թարգմ.) ԱՐԱՄ ՀՈԼԱՍԱՐԵԱՆ. — Տըտունջը իմ (քերթուած), ԼՈՒՍՆԹԱԳ. — Պատմ. Հայ. Ձայնագրութեան, ԱՐԻՍ. ՔԶ. ՀԻՍԱՐԼԵԱՆ. — Դժբախտ հանճարի մը շիջումը, ԽՄԲ. — Խղճամիտ պաշտօնեան, Մ. ՍԱՆՈՍԵԱՆ. — ԱԶԳԱՅԻՆ ԿԵՍԱՆՔԸ, Շաբթուան լուրեր:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

“ՄԵՌԵԼՈՅ,,Ի ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«Երբ ոչ հասն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ: Ապա եկե մկռանիցի թագուս արդիւնս առնեալ»: ԱԻԵՏԱՐԱՆ

Ազգի մը քաղաքակրթութեան ճշգրիտ աստիճանաչափերէն մէկն է իր անհետացող սիրելիներուն ընծայած յարգանքը, և այդ յարգանքն արտայայտելու եղանակը: Այս տեսակէտով Հայ Ազգն ու Եկեղեցին շատ բարձր գաղափար մը կուտան օտարներուն՝ այն խորունկ պաշտանքով զոր դարերու երկար հոլովումի մը մէջ ընծայած են միշտ ու կ'ընծայեն մինչեւ հիմակ ալ՝ իրենց ննջեցեալներուն: Մեր գերեզմանատուները նուիրական սրբավայրեր են մեզի

համար(*): Ամէնէն սկեպտիկն անգամ յարգանքով կը մտնէ այդ բացօթեայ տաճարներէն ներս, և մեռեալի մը ի յիշատակ արտասանուած «Հողւոց» մը երկեղածութեամբ մը կ'ունկնդրուի հաւատացեալ հոգիներէ:

Հայ Եկեղեցին, տարուան հինգ տաղաւարներու երկրորդ օրերը Մեռելոց յիշատակին յատկացնելով, կը նուիրագործէ ու պարտադիր կ'ընէ այդ յարգանքը: Այդ օրերուն ժողովրդային համախմբումները գերեզմանատուներուն մէջ, պարզուած այլա-

(*) Մասնաւոր յիշատակութեան արժանի է այս օտարի Պեշիկթաշի Ազգ. Դերեզմանասան — երեսնամեայ թուակաշութեան ահաւոր օրերուն մեր ձեռքերէն խլուած այդ մուսուլման վայրէ՛ք — բարեկարգութեան համար օտուած հոգածութիւնը՝ յատկապէս յանձնաժողովի մը ձեռքով, որուն աշխատութիւնները համակիր քաղաքներէն մը կը գտնեն ամբողջ ազգին, եւ մանաւանդ Պեշիկթաշի պատշաճ քաղեցիկներու ընդհանրութեան կողմէ, հակառակ նոյն քաղիկ մէջ սա միջոցին տիրող կարգ մը անհամաձայնութեանց, որ յուսմեք Թէ վաղանցիկ հանգամանք մը կ'ունենան:

զան երեւոյթներով, խորհրդածելու առատ
նիւթ կը մատակարարեն դիտողի մը աչ-
քին :

Բազմութիւնը, որ այդտեղերը կը աա-
րուբերի, ընդհանրապէս անտարբերներու,
հետաքրքիրներու հաւաքոյթ մըն է, ժա-
մանակ անցընելու համար եկած, որոնց մէջ
սակայն՝ բարեբախտաբար հետզհետէ կը
նուազի բարեկրթութիւնէ զուրկ, գերեզ-
մանատանց նուիրականութեան անտեղեակ
անձերու թիւը: Ատոնք ու է տպաւորու-
թիւն չեն թողուր վրադ. օտլորական ամ-
բօրին է պարզապէս:

Բայց այցելուններու կարեւոր մաս մը
կայ, որ մի'միայն մեռեալներու յարգանքի
հարկը մատուցանելու, անոնց հոգիին հա-
մար աղօթք մը մրմնջելու, սիրելիի մը գե-
րեզմանին թափուած կաթիլ մը արցունքով
վշտահար սիրտը զովացնելու անդիմադրելի
պէտքէն մղուած կը դիմէ այդ սրբավայրը:
Հոն են որդեկորոյս մայրը, անմխիթար աչ-
քին, ծնողաւէր զաւակը, քրոջ կամ եղբոր
գորովէն զրկուած երիտասարդը: Ծաղիկ-
ներով ծածկուած հողակոյտի մը քով կը
տեսնես սեւազգեստ պառաւ մը, որուն
միակ հառաչանքը՝ «զաւակս», սիրտ կը
բզբտէ, ու բառ մը չես գտնէր սփոփանքի:
Յանկարծ այնտեղէն կ'անցնի պարզուկ
տէրտէր մը՝ Ուաչը ձեռքը: Վշտաբեկ ձայ-
նով հրաւէր մը՝ «Տէր Հայր», և ահա քա-
հանան այնտեղ է, պաշտօնին գլուխը: Կը
մրմնջէ ննջեցեալներու հոգւոյն հանգստեան
համար որոշեալ շարական մը, կը կարդայ
Աւետարանէն հատուած մը, կ'արտասանէ
Հոգւոցը, և այդ վշտահար սիրտը թեթե-
ւացում մը, սփոփանք մը կը զգայ, մա-
նաւանդ ա՛յն ատեն, երբ Աւետարանի պաշ-
տօնեան գիտնայ զգածուած հոգիով բարձ-
րացնել իր աղօթքի մրմունջը, և միեթա-
րական բառով մը սրտապնդել որդեկորոյս
մայրը՝ իր դառն վիշտին մէջ:

Այսպէս՝ գերեզմանատան ամէն կող-
մերը:

Կիներ, աղջիկներ, պառաւներ, և այ-
րեր ամէն հասակէ, իրք վիշտի բաժակէն
խմած են, կը զգան այդ պէտքը, աղօթե-
լու՝ իրենց սիրելիին գերեզմանին վրայ,

օրհնել տալու անոր շքեղ շիրմը կամ պարզ
հողակոյտը:

Ինչո՞ւ:

Այս ինչո՞ւն պատասխանին մէջ կ'ամ-
փոփուի լուծումը ամենախոշոր հարցի մը:
Ատիկա կը ցուցնէ թէ մարդ մի'միայնիւ-
թեան կեանքով չապրի, թէ մարմինի
պահանջումներէն անջատաբար, հոգին իր
անտեղիտալի պահանջումներն ունի, որոնց
անկարելի է գոհացում չտալ:

—Դիտեցի՞ք, ըսի անցեալ օր գերեզ-
մանատունէ դարձին՝ երիտասարդի մը, որ
անկեղծ և քիչ մըն ալ յաւակնոտ շնչտով
մը կը պարծենար թէ ինքը կրօնքն աւե-
լորդ բան մը կը նկատէ: Դիտեցի՞ք գե-
րեզմանատան մէջ թէ ո՛րքան փութկո-
տութեամբ զիս կամ պաշտօնակիցս կը
հրաւիրէին օրհնելու իրենց սիրելիներու
գերեզմանները: Դիտեցի՞ք նաև թէ ո՛ր-
քան սփոփանք կը գտնեն անմխիթար
սիրտեր՝ կրօնքի պաշտօնեային կողմէ ար-
տասանուած աղօթքով մը, կամ Աւետա-
րանի սրտապնդող հատուածով մը: Եթէ
այդ վշտահար հոգիները չունենային զօրա-
ւոր հաւատք մը՝ յաւիտենական կեանքի
վրայ, եթէ ժողովրդային ամէն խաւերու
մէջ տարածուած ըլլար որքան սխալ, այն-
քան ալ միասաբեր համոզումը թէ կրօնքը
անպէտ բան բան մըն է, և մարդիկ աչ-
խարհ եկած են աննպատակ ու պիտի ան-
հետանան խոտի մը պէս, ո՛հ, այն ատեն
աշխարհ ահաւոր չարափոխումի մը պիտի
ենթարկուէր, և ամէնէն մեծ չարիքը որ
յուռաջ պիտի դար ընդհանուր անաստուա-
ծութենէն, չպիտի ըլլար ահաւիտեական
վրայութիւնը՝ անխուսափելի հետեւանք
այս կեանքէն անդին յաւիտենական կեան-
քի մը չգոյութեան գաղափարին, այլ մա-
նաւանդ խորունկ յուսահատութիւնը մարդ-
կային հոգիին՝ վիշտի տագնապներուն մէջ,
ահաւոր պարապութիւնը իր սիրտին մէջ,
յոյսի ոչնչացումը, հետեւապէս և սիրոյ,
անշահախնդիր, անձնուէր սիրոյ աղբիւրին
խապառ ցամաքումը: Տանդէի «Դժոխք»ին
մէջ նկարագրուած արհաւիրքները աննշան
պիտի մնային հաւատքէ և յոյսէ զուրկ
հոգիներու ներքին տագնապի տուալտանք-
ներուն քով:

Երիտասարդ բարեկամս լուռ մնաց, չուենալով համոզիչ պատասխան մը: Եւ արդէն, հակառակ սկեպտիկ ոգիին զոր կը ցուցնէր, հաւատքի կայծը մարած չէր երեւնար սրտին մէջ: Եւ մեր յոյսն ու մխիթարութիւնն այն է որ նորահասներու ստուար թիւին մէջ, որ սկեպտիկ դադափարներու արտայայտութիւնով կը կարծեն օգտակար գործ մը ընել, շատեր կան որոնց սրտին մէջ մարած չէ այդ կայծը, և պատեհ առիթի մը կը կարօտին հրահրուած տեանելու համար այդ կայծը, որ լոյսի ճառագայթ մը պիտի ըլլայ իրենց:

Ո՛հ, կրօնքի մխիթարութիւնը. ատիկա անհուն է ճշմարիտ հաւատացեալին համար: Եւ Աւետարանի այն հատուածներուն մէջ որ հոգեկան խորունկ սփոփանք մը կը ներշնչեն, ուշագրաւ է այն էջը որ կը սկսի գրութեանս վերեւ գրուած հատուածով:

«Եթե ոչ հասն ցոռենոյ անկեայ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ. ապա եթե մեռանիցի, բազում արդիւնս առնէ»:

Յիսուսի այս խօսքը՝ ամէն Բրիտանիայի, մանաւանդ Հայուն համար գերազանցօրէն սիրուող, սրտապնդող ազդեցութիւն մը ունեցած է:

Յորենի հատիկին նման, որուն՝ հողին տակ կաղմալուծումը, տարբաղադրութիւնը, մահը ծնունդը կուտայ բազմաթիւ ուրիշ հատիկներու, Հայն ալ դարերու երկար սողանցումի մը մէջ, հուրի և սուրի, աւարի ու աւերի ահաւոր շրջաններէ անցած պահուն, ա՛յդ համոզումով մնուած է ի պաշտպանութիւն իր Եկեղեցիին և իր ազգին: Ան վստահ, ապահով մնացած է թէ իր մահը ծնունդ պիտի տայ նոր կեանքերու, իր թափած հեղեղանման արիւնով ոռոգուած դաշտերը օր մը պիտի պտղաբերեն ազատութեան, արդարութեան, հաւասարութեան վստահ ազաւարները:

Եւ Հայը խաղաղած չէ իր այդ համոզումին մէջ: Սպառնալու ջարդի ամէնէն արհաւիրի տազնապնդումը յաջորդած են բաղդատարար հանգիստ օրեր. վերընձիւղած են ազգի և կրօնքի ազատութեան առաւել կամ նուազ երջանիկ ժամանակներ: Այսպէ՛ս եղաւ 1896ի ջարդէն ետքն

ալ: Աւա՛ղ, ձմեռը որ այդ ջարդին յաջորդեց, շատ երկարատեւ եղաւ — աւելի քան տասներկու երկար տարիներ — հողին տակ թաղուած հարիւր հազարաւոր դիակներու տարբաղադրութենէն, հողին վրայ սփռուած կոյրմիր արիւնի ոռոգումէն յառաջ բերելու համար ազատութեան օրեր. և սակայն տեսնե՛ք թէ վերջապէս եկան այդ օրերը:

Արցունք մը՝ հայ նահատակներու հողակայտերուն վրայ, — Շիրի, Պալքլը ու ամբողջ Հայաստանի ու Կիլիկիոյ մեծատարած մեռելատաններու մէջ — սրտի և հոգիի պարտք մ'է ամէն հայ քահանայի համար որ առիթը կ'ունենայ այցելելու այդ բացօթեայ տաճարները: Եւ պիտի բաղձայի որ ըստ քահանաները՝ նահատակներու շիրմին վրայ իրենց Հոգեւոյր արտասանելու ատեն՝ սրտագին պաղատանք մը ուղղէին տիեզերքի Արարչին:

«Ո՛վ խաղաղութեան, սիրոյ և համեմալութեան գերագոյն Աստուածը, համախումբ նահատակուող այս մաքուր հոգիներու անմրմունջ ազաւանքին հետ լսէ՛քու խոնարհ, յեալին պաշտօնեայիդ սրտագին կոչը: Ասոնք վայրկեան մ'իսկ չվարանցան քու սուրբ Անունիդ և իրենց ազգային արժանապատուութեան համար մատնուելու կրակի, սուրի և ամէն տեսակ տանջանքներու: Հիմա՛, ո՛վ Տէր Աստուած, աղատագրեալ Թուրքիոյ մէջ Հայը ա՛լ վախ չունի համախումբ ջարդուելու. բայց տո՛ւր որ այսուհետեւ Հայը դադրի եղբայրասպան ցաւագին պայքարէն որուն բռնուած է. տո՛ւր որ ինչպէս երբեմն չվարանցաւ նետուելէ մահուան գրկին մէջ, հիմա ալ չվարանի մեռցնելէ իր մէջ անձնասիրութեան, իրարատեցութեան, եղբայրասպանութեան մոլեգին կիրքը: Թո՛ղ մեռնին ատոնք, և այդ չար կիրքերու կազմալուծումէն թո՛ղ յառաջ գայ կատարեալ խաղաղութիւնն և համերաշխութիւնը, եղբայրական սէրը և իրերահասկացողութիւնը ազգին բոլոր դասակարգերուն մէջ, եկեղեցականին, աշխարհականին, աղատականին, պահպանողականին, երիտասարդին ու ձերին մէջ հաւասարապէս:»

ԶԱՐԲԱՅՐ ՔԱՅԱՆԱՅ

ՕՐԷՆՔԸ

«Ճանաչել զօրհն մտաց բարեաց ե».
(Առակ ԺԳ. 15)

Տիեզերքի մէջ եթէ կան այնպիսի գիտելիքներ որոնց իսկութիւնն ու յատկութիւնները մարդկային սահմանաւոր մտքի կարողութենէն կը խուսափին, միւս կողմէ, սակայն, անհամար առարկաներ ամենայնստակ եղանակաւ ի լոյս կը բերեն ու կը հաստատեն այն ընդհանուր սկզբունքն, ըստ որում ուր բան մը գոյութիւն ունի, հո՛ն իշխող մը կայ անկասկած. ի՛նչ որ ալ ըլլայ գոյացութեան տեսակը: Կարելի չէ երբեք նշմարել գործօն էակ մը բախտին թողուած: Երբ կը տեսնենք որ իրողութիւն մը անյեղապէս յարդիւնս կուգայ միեւնոյն պարագաներու մէջ, իսկոյն կը համեմատենք զայն գերազոյն Զօրութեան մը ձեռամբ դրուած կարգի մը հետ, զոր կը ճանչենք Օրհնք անունին տակ: Օրէնք կը նկատենք և զայն թէ մարդ պարտի արդար և բարբարա ըլլալ: Օրէնքներն, ուրեմն, այն հաստատուն և ընդհանուր կարգն են, որուն համեմատ կը կատարուին իրողութիւնները, կամ պէ՛տք է որ կատարուին, երբ կամքէ կախումն ունին, և այսու կը ճանչենք այն տեսակ օրէնքներ որ կը հրամայեն բնութեան, կը ճանչենք և այն տեսակ օրէնքներ որ կը հային գիտակցութեան: Եւ այս բնական պիտի ըլլար. վասն զի գիտենք թէ երկու տեսակ էակներ կան, ոմանք առանց ունենալու իրենց գործերուն գիտակցութիւնը, ճակատագրօրէն կ'ուղղուին իրենց սահմանուած վախճանին. ուրիշներ գիտակցութիւն ունենալով կը գործեն գիտաւորութեամբ մը և կարող կ'ըլլան ընտրելու իրենց համար այս կամ այն վախճանը: Առաջնոյն կը պատկանին Փիղիքական աշխարհի կոյր գործիչները. իսկ երկրորդին՝ ազատ ու իմացական էակները:

Մարդկային ընկերութիւնը կազմող իւրաքանչիւր անհատ հաւասարապէս կամքի նոյն ազատութիւնը վայելած, և բանակա-

նութեան ու գիտակցութեան կրկին լուսոյ առաւելութիւններով օժտուած ատեն, պէտք չէ՞ որ նոյն պատկառանքով մօտենայ օրէնքին և գիտակցութեամբ ճանչէ անոր արժէքն ու յարգը: Առական Գրքի իմաստուն հեղինակն ըսել կ'ուզէ թէ առնա՛ք միայն կը ճանչնան Օրէնքը ու կ'ըմբռնեն օրէնքին առաւելութիւնները, որոնք չարունակ բարւոյն հետեւելու տրամադրութիւնը ունին ամենուրեք: Ասի, արդարեւ, ճշմարտութիւն մ'է ինքնին, զոր հասկնալով և եթ մարդ պարտաւոր կը զգայ ազատ հնազանդութիւն մը ցոյց տալու օրէնքին, առանց երբեք վատնելու տեսնելու իր ազատութիւնը, քանի որ իբրեւ մացական էակ գիտէ թէ կրնայ՝ եթէ ուզէ՝ ոտնակոխ ընել օրէնքը. գիտէ միանգամայն թէ պարտի յարգել զայն, որովհետեւ կարող է ըմբռնել թէ օրէնքն արտայայտութիւն մ'է այն կարգին, որ ըստ ինքեան արժանի է հնազանդութիւն ընդունելու, ազատ հնազանդութիւն. կամքերը կը հպատակեցնէ այն, առանց բռնադատելու զայնս:

Բարոյական Օրէնքը, որ իրեն սկզբունք ունի բարւոյն գաղափարը, կ'ուսուցանէ մեզի ի՛նչ բան որ պարտաւորութիւն ունինք ընելու և ի՛նչ բանն որ պարտաւորութիւն ունինք խորշելու: Ինքզինքն ազատ զգացող էակ մը երբ յղանայ բարւոյն գաղափարը մտքին մէջ, բանականութիւնը կուտայ անմիջապէս ծանօթութիւնն այն ամէն պարտուց, զորս այդ էակը պարտի կատարել թէ՛ առ անձն և թէ՛ առ ընկերս: Մարդուն լինելութիւնը կը կախանայ իր իսկութիւնն իրականացնելուն մէջ, և երբ իր լինելութեան գիտակցութիւնը կ'ունենայ, նոյն ատեն կ'ունենայ նաեւ պարտուց գաղափարն և պարտականութեան զգացումը, հետեւաբար պարտուց և իրաւանց կատարման թերութեան մէջ մարդ նոյն իսկ իր լինելութեան, իր իսկութեան դէմ գործած կ'ըլլայ:

Եթէ երբեք Օրէնք ըսուածը գոյութիւն ունեցած չըլլար, ո՞վ պիտի ուսուցանէր մարդուն ինչ որ պարտի ընել կամ չընել, ո՞վ պիտի սահմանէր ընկերութեան մէջ

եղած փոխադարձ առնչութիւնները, և ինչպէս պիտի կրնար մարդ գանազանել բարին չարէն: Տարակոյս չկայ թէ այն ատեն ամէն ոք պիտի վնասէր ուրիշի ազատութեան, ինչքին և համբաւին, և ի հարկէ ընկերութիւնն ալ կեանք պիտի չունենար, քանի որ կարելի պիտի չլլար անհատնութիւն՝ հաւաքական ոյժ մը յառաջ բերել, երբ իւրաքանչիւր ոք չի գիտեր իր պարտքը: Ահաւասիկ կը տեսնենք բարոյական օրէնքին անփխտելիութիւնը հաստատուած որոյ ապացոյցներով, ապա թէ ոչ պիտի հարկադրուէինք հարցնել թէ ո՞ր է արդարութիւնը ըսուածը: Միթէ յափշտակութեան և ուրիշի զրկման մէջ պիտի վնասուէինք զայն. միթէ ընկերութեան քայքայումը փութացնող և մարդ էակը վայրենութեան տանող վիճակը պիտի տար մեղի արդարութեան գաղափարը: Արդարութիւնը մարդկային ընկերութեան նուիրական կապն է. իր մէջ այն կը պարունակէ մարդոց գլխաւոր պարտաւորութեանց կատարումը. եթէ երբեք մարդ իր ուշադրութիւնը գէթ անգամ մը չի նուիրեր անոնց, ինչպէս կրնայ արդարութիւն գործած ըլլալ. ընդհակառակն եթէ պարտուց և իրաւանց յարգն ու արժէքը զիտէ լիովին, որ է ըսել յօժարակամ հնազանդող մ'է Օրէնքին, իսպառ հեռի են իրմէ օրէնքի դէմ եղած գործեր: Չայս անա իմացեր են: Օրէնքը ճանչողներ և անոր արժէքը բարձրացնողներ, որոնք իսկապէս չեն դադրիր բարի ըլլալէ և արդարութիւնը սիրելէ: «Ճանաչել զօրէն մտաց բարեաց է» թէ՛ իր անձին և թէ՛ ընկերութեան վնասակար դարձած մէկը չի կրնար գիտնալ օրէնքն և իմանալ անոր արժէքը, թէ և օրէնքն առ հասարակ ամենուն համար ալ ուսուցանող է պարտուց և քարոզող արդարութեան:

Ամէնքս ալ կրնանք գիտցած ըլլալ թէ մարդ առանց շարժառիթներու չի գործեր բնաւ, այնպէս որ միւր բոլոր որոշումները կրնան բացատրուիլ շարժառիթի մը ազդեցութեամբն որ ա՛յս կամ այն կողմը կը վարէ մեզ: Այդ շարժառիթներն որ կերպով մը կը ներգործեն մեր կամքին վրայ

և կը շարժեն զայն, սովորաբար և զլիաւորաբար շահուն և պարտուց շուրջը կը դառնան: Հոս նկատի առնունք միայն առաջինը: Շահը կը ներկայացնէ ու կը բովանդակէ բոլոր եսական շարժառիթներն և ազդեցութիւններն որոնք կը մղեն մարդիկը դէպի նպատակն իրենց գործառնութեանց: Շահը հաստատուն ըլլալու հանգամանք մը ցոյց կուտայ, մարդէ ի մարդ կամ միեւնոյն մարդուն մէջ շարունակ փոփոխութեան ենթակայ չէ, ինչպէս է հաճոյքը. այլ ամէն մարդու համար կարծես գործունէութեան զսպանակ մ'է, և պիտի կրնանք ըսել թէ մարդ անոր համար լաւ կը ծառայէ իր շահերուն, որովհետեւ կ'ուղէ միեւնոյն գծին վրայ յարատեւել: Շահագրգիռ շարժառիթն կրնայ նաեւ բարեբար ըլլալ մարդկութեան համար. վասն զի երբ մարդ կ'առաջնորդուի իր արդար շահէն, աշխատութիւն չի ինայեր երբեք լաւագոյն գնով վաճառելու համար ա՛յս կամ այն բանը, իր մրցակիցներն ունենալով հանդերձ, կամ կը ջանայ գտնել հնար մը ո՛ր և է բան աւելի արագ և աւելի արժէքաւոր եղանակաւ չինելու. երկու պարագաներու մէջ ալ թէ և կը կատարէ մարդ ուրիշներուն գործերը, բայց միեւնոյն ատեն կը խորհի իրենը: Ահա այս եսական ջանքերը կը նպաստեն քաղաքակրթութեան յառաջդիմութեան, զի ամէն կողմէ իրական ծառայութիւն մը մատուցած կ'ըլլան ընկերութեան:

Շահն ընդհանրապէս մտաւորական վիճակի բարձրացման ևս առիթ կ'ըլլայ, թէ՛ որոշելու համար այն նպատակն որուն պէտք է հասնիլ և թէ՛ դէպի այն առաջնորդող միջոցները դիւրացնելու համար: Չկայ մէկը որ բազմատեղութեան չղնէ իրարու հետ այն բազմաթիւ ու բազմատեսակ պաշտօններն որոնք կը ներկայանան իրեն. անպատճառ պիտի կռնէ անոնց առաւելութիւններն և անպատեհութիւնները, պիտի քննէ թէ ի՞նչ չափով անոնցմէ իւրաքանչիւրը կրնայ պատշաճիլ իր յարմարութեան և արդիւնաւոր ըլլալ. և ասպարէզն ընտրելէ վերջ ալ որքան ճիգեր պիտի թափէ տոկոսին կարեւոր տեղ մը գրաւելու եւ

զայն պահելու համար: Կը տեսնենք անա-
ւասիկ թէ շահու զգացումն հասարակաց
լինելու հանգամանքէն զուրկ չէ, և ամ-
բողջ մարդկութիւնը, պիտի ըսենք, իր
շահու ճիգերով կը տեսնէ նիւթական ու
բարոյական բարօրութեան առաւելումը:

Արդ, եթէ շահուն օգտակարութիւնն
ակնբեր է թէ՛ առանձնապէս և թէ ընդ-
հանրապէս, ո՞վ երաշխաւորած է որ եթէ
աշխատութիւն և ջանք չխնայենք այնքան
աւելի շահ կրնանք ձեռք բերել. ո՞վ ապա-
հոված է մեզ թէ պիտի յաջողինք ըստ բա-
ւականին օգուտ քաղել ա՛յս կամ այն աշ-
խատանքէն. կը կարծենք արդեօք որ պիտի
կրնանք շահիլ կամ ունեցածնիս պաշտպանել
առանց Օրէնքի գոյութեան: Ծշմարտութիւնն
ա՛յս է որ Օրէնքը չի թոյլատրեր երբեք
ասոր կամ անոր՝ յափշտակել ուրիշին շահը,
չի ներեր ուրիշին այնքան ճգնութեամբ հնա-
րած միջոցներն՝ աւելի օգուտներ տեսնե-
լու նպատակաւ՝ բռնի ի գործ ածել, զրկե-
լով հնարիչը. վերջապէս իսպառ կ'արգիլէ
ուրիշին սեպհականութեան անիրաւարար
տիրանալը: Անոնք որ չեն ուզեր գիտնալ
ո՛չ պարտք և ոչ իրաւունք, արդարու-
թեան սիրողներ չեն և չեն զգար օրէնքին
պէտքը, այնպիսիներ մոռցած են իրենց
անձը, իրենց նմաններն և նոյն իսկ իրենց
Աստուածը: Ընդհակառակն ճշմարիտ մարդը
պարտաւոր կը զգայ պահելու իր անձը,
իր պատիւն և իր կեանքը, և ըմբռնած է
թէ այդ ամէնքը պիտի կատարուին Օ-
րէնքով և եթէ: Մարդ արարածը դարձաւ
իր Արարչին՝ Կրօնի օրէնքով, ճանչեց իր
անձը՝ բարոյական օրէնքով, և իր շահը,
իրաւունքն ու յարաբերութիւններն որո-
շուած տեսաւ դրական օրէնքով: Ուրեմն,
օրէնքին իսկութիւնը ճանչելու մասին խոր-
հրդածելով, կ'ըմբռնենք անոր այնքան
էական և օգտաշատ ըլլալը. մեզմէ իւրա-
քանչիւր ոք՝ առանց երբեք իր ազատու-
թիւնը վտանգուած տեսնելու՝ կրնայ ու
պարտի հնազանդիլ Օրէնքին:

Այսպէս քրիստոնէական կրօնքը կը պա-
հանջէ իր Օրէնքին ու Ծնորհներուն սուջն
հնազանդ տեսնել իր հաւատացեալներու
բազմութիւնը, զի Աւետարանով Արդա-

րութիւն և Ծշմարտութիւն քարոզուեցաւ
երկրի վրայ, և մարդոց պատուիրուեցաւ
ապրիլ Սրբութեամբ ու գործել առաքի-
նութեամբ:

Գատըղիւղ

ԳՆԷԼ Մ. Վ. ԳԱԼԷՄՔԵԱՐԵԱՆ

ՏՐՏՈՒՆՁՔ ԻՄ

Ապրիլ կ'ուզեմ միշտ անբասիր

Մի կեանք,

Սրբութեամբ օծուած, սիրալի՛ր

Համակ.

Բայց ըպիրշ մեղի՛ն կ'աղտոնեմ

Զանի

Սրբիս մեջ կի՛րի՛նք քաղաքի՛ն

Վառի՛ն:

Դեղեցիկ խոհե՛ր, խեղճե՛ր

Վրսե՛մ,

Վե՛ր մեղե՛կն զիս, դեպ ի վե՛ր

Կ'ըսեմ.

Բայց տեսնեմ սողալս՝ զեղ մի որդի

Զաղի՛ր,

Գրծծութիւններուս մեջ նստող

Նանի՛ր:

Բարի՛ն կը խորհիմ, բայց շուտով

Անս

Զարը կը բռնակի քաւոյնի տո՛ւ

Հուսա՛:

Բարի՛ն կ'երագեմ, միշտ բարի՛ն

Կամի՛մ,

Զարի՛ն կեղտեմ ինձ կը փառի՛ն

Կրկի՛մ:

Քանի՛ եղուկ եմ, Աստուծ ի՞նչ,

Քանի՛,

Ո՞վ պի՛ս՝ զիս փրկի՛ր Զարե՛ն սի՛ն

Կամի՛:

ԼՈՒՍՆԻԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Մեր մէջ ամէնէն շատ խօսուած խնդիրներէն մին է Ազգ. Եկեղեցւոյ բարեկարգութեան հարցը, որ կենսական ընդթ ունենալով հանդերձ, դեռ կը մնայ հոն ուր որ էր իր վրայ խօսուիլ ու գրուիլ սկսած օրը, չենք գիտեր քանի տարիներ առաջ: Յայտնի չէր թէ ինչն է որ կ'ուզուի բարեփոխել: Բայց այս անգամ ուրախութեամբ տեսանք Տաճարի մէջ Տ. Գրէլ Ծ. Վ. ի կարգ մը առաջարկութիւնները՝ Ամեն. Ս. Պատրիարք Հօր ուղղեալ գրութեան մը մէջ, զոր ստորագրած են նաեւ Կրօն. Ժողովոյ անդամ ուրիշ եկեղեցականներ ալ: Նախաքայլ մը պէտք է համարիլ ասիկա դէպի եկեղեցական-ծիսական բարեփոխում, որուն իրագործումը հաստատապէս անհրաժեշտ է այլեւս:

Պարտիզակի, Ներկայ տարւոյ «Փարոս»-ի Յունիս-Յունիսի միացեալ պրակին մէջ «Հայ Եկեղեցի» վերնագրին ներքեւ լուրջ ուսումնասիրութիւն մը կար ակնարկուած խնդրոյն համար, որով ժամանակը հասած կը նկատուէր այլեւս Հայ Եկեղեցւոյ բարեկարգութեան ձեռնարկելու:

Դադափարը խիստ այժմեական է. բայց մինչեւ որ Ազգը ներկայ ճգնաժամէն ազատի և թէ՛ կեդրոնի, թէ՛ գաւառներու մէջ գործերը որոշ ուղղութիւն մը ստանան, դեռ բուռական ժամանակ կ'անցնի, որով շատեր իրենց դիտողութիւնները ներկայացնելու միջոց պիտի ունենան, եւ պէտք է որ միայն մէկ քանիններու թելադրութեամբ հասցեւորվ զործի չսկսուի: Բանի որ խնդիրը Հայ ընդհ. առաքելական Եկեղեցւոյ բարեկարգութեան համար է, պէտք է աշխարհիս բոլոր մասերուն մէջ գտնուող հայ նշանաւոր եկեղեցականաց և ձեռնհաս աշխարհականաց ալ կարծիքն հարցուի, անոնց ալ դիտողութիւններն ու թելադրութիւնները հաւաքուին ի մի, եւ ներկայացուին այդ նպատակաւ գումարուելիք եկեղեցական համազգային ժողո-

վին, որուն կը նախագահէ անշուշտ Ամենայն Հայոց Ս. Հայրապետը: Եւ այս ժողովը պէտք է պատմական ժողովներու կարգն անցնի. (Ժողովին տեղը, գումարման կերպը, ժամանակը և ուրիշ ձեւակերպութեանց պատրաստութիւնը Ազգային վերին իշխանութիւնները կը հոգան և կ'որոշեն հարկաւ):

Ես՝ իբր պաշտօնեայ Հայ Եկեղեցւոյ, և նախանձախնդիր՝ անոր ժամանակի ոգւոյն համաձայն բարգաւաճման, այս տողերը գրելով նպատակ ունիմ ի վաղուց անտի ի մտի ունեցած դիտողութիւններս յառաջ բերել, որք են.

Ա.— Համառօտել եկեղեցական այն քան երկայն պաշտամունքն, որ տօնական օրերուն մինչեւ 7-8 ժամ կը տեւէ, եւ եկեղեցւոյն սրբավայրի վսեմ պատկառանքը կը կորսուի:

Բ.— Չափաւորել սուրբերու նուիրուած պաշտամունքը և յիշատակութիւնը:

Գ.— Ընդհանուր ընթերցմանց և երգեցողութեանց պաշտօնէից կողմանէ, առանց երբեք հասկցուելու ունկնդիրներէն, կիսատ թուծակաբար կրկնութիւնը տարբեր ձեւի վերածել:

Դ.— Բառնալ արարողութեանց շատ մը աղօթքներու և սարկաւազի յատուկ քարոզներու և փոխերու հազիւ տող մը կարգացուելէ յետոյ ուրիշ կտորի մը ցատկելու տգեղ սովորութիւնը:

Ե.— Մանկական քնաբեր քաշքշուքներով ըստ քմաց երգերու սովորութիւնը ի սպառ վերցնել, և հաստատել միօրինակ և միջակ չափով երգելու, եւ եթէ կարելի է ժողովուրդն ալ վարժեցնելու դրութիւնը, որպէս զի ձանձրանալով չառնէ չքալէ:

Զ.— Չափաւորել բուրվառի կամ խընկարկութեան գործածութիւնը(*):

Է.— Օրուան յիշատակուած Սուրբին յատուկ շարականը երգելէ վերջ, անոր կը

(*) Ըստ մեզ անպատեհութիւն չկայ ասոր մեջ. ինչպէս քժիշկ Բաքաւեան իր Եկեղեցական Առողջապահութեան մեջ կը գրէ, օգտակար իսկ է իր հակամեխական, մթնոլորտը մաքրող յաճութեամբ:

կցուին առաքելոց, մարգարէից ևն. յատկացեալ շարականներ. բաւական համարիլ միայն առաջին պատկերի երգեցմունքը, որ ուղղակի տօնեցեալ սրբոյն համար է շինուած:

Ը.— Մէկ դասէն երգուած շարականի տունը, միւս դասէն չկրկնել և «Փառք Հօր»ը սկսիլ:

Թ.— Գչոց և ծնծղայ գործիքներն ալ եթէ վերնան գէշ չըլլար, ինչ քաղցրութիւն և աստուհանոյ բան մը կայ ատոնց հանած անախորժ շխիկոցներուն մէջ:

Ժ.— Խստիւ արգիլել քահանայից և դպրաց եկեղեցւոյ մէջ, իբր ի հասարակ տեղւոյ երթեւեկութիւնը և այլ անպատեհութիւնը տգեղ:

ԺԱ.— Ձեռնադրութեան կանոնին մէջէն բոլորովին ջնջել «նզովք»ներու շարքը և չափաւորել «աշակերտի» և հետեւի»ներու կրկնութիւնը:

ԺԲ.— Եկեղեցական պաշտամանց գըլխաւոր մասը կազմելու է խորոզը, ամէնէն դժուարն է այդ. և եթէ ազգային կեանքը այսպէս շարունակուի, ունենալիք ալ չունինք այդ նուիրական գործին ատակ քահանաներ, և անկարելի է ամէն եկեղեցւոյ մէջ վարդապետի մը ներկայութիւնը: Այս նպատակին հասնելու համար հարկ է որ, գոնէ այսուհետեւ, նկատի առնուին ընծայացուններուն հոգեկան, մտաւոր և բարոյական վիճակները, թեկնածուն պէտք է թեզ պատրաստէ և քննութիւն անցնէ: Մենք՝ եկեղեցականքս, իբր Բրիտանիոյ հետեւողներ, պաշտօն ունինք անոր Աւետարանը քարոզելու, ինչպէս յանձնարարած է ինք. այս է մեր բուն կոչումը: Եկեղեցականը՝ անոր համար է որ հասնի ի ժամու և տարածումու ու քարոզէ զբանն, մխիթարելու, սաստելու, յանդիմանելու և զգործաւ աւետարանչի գործելու: Ուր է ասոնց մէջ մեռել թաղելու ևն. պարտականութիւնները՝ որոնց կատարման մէջ միայն կը սահմանափակեն մեր քահանայք իրենց հոգեւոր պաշտօնին կիրառումը, յարգելի նուազ բացառութեամբ: Սոյն առաջարկութիւնը չէ կարելի գործադրել, մինչեւ որ մէկ քանի հատ կղերանոցներ

չունենանք և կամ եղածները չքարեկարգենք (Երուսաղէմ, Արմաշ և այլուք) եւ քահանայից ապրուստի խնդիրը չկանոնաւորենք. ահա՛ այն ատեն միայն ուսեալներ թեկնածու կրնան ըլլալ այդ պաշտօնին:

ԺԳ.— Տ. Գնէլ Ծ. Վ. իր Գ. րդ. առաջարկութեամբ «Ամէն ատեն արտօնել պաշտօնադրութիւնն...» ըսած էր. համամիտ եմ, բայց գոնէ Մեծ Պահքը բացառութիւն չընենք:

ԺԴ.— Վախճանեալ եկեղեցականաց մարմինի օծումն ալ եթէ վերցուի, մեղանշած կ'ըլլանք արդեօք:

Յառաջիկային գումարուելիք եկեղեցական Համագումար ժողովոյն մատուցանելու համար սոյն դիտողութիւն և առաջարկութիւններս պարզելէ յետոյ, խօսքս կ'եզրակացնեմ թէ քարեկարգեալ եկեղեցի ունենալու համար պէտք ունինք ամեն բանէ առաջ քարեկարգեալ եկեղեցականութեան. «Ձի օրէնք և կանոնք ըստ ինքեան չեն ինչ, եթէ չիք օրէնսգէտ և կանոնապահ»:

Առաջն. Փոխանորդ Պրուսայի
ՎԱՐԴԱՆ Ծ. ՎՐԴ. ԳԱՍՊԱՐԵԱՆ

ԿՐՕՆԱ-ՊԱՏՄԱԿԱՆ

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՆԵՑԻ

(Շար. նախորդ թիւին)

Անգամ մը երբ Ստեփանոս մերժեց հաղորդութեան համար իրեն եղած առաջարկը՝ Գերմանոս⁽¹⁾ կանչեց դնա և պատ-

(1) Սա իբրեւ մետապոքիտ Կիւզիկէի՝ պաշտպան կեցաւ ժամանակ մը միակամոնքեան, որմէ հրաժարեցաւ յետոյ երբ Կ. Պոլսոյ պատրիարքական գահը բարձրացաւ (715): Լեւոն Իսաւրացիի ժամանակ յաւուցուած պատկերամատուցութեան կոչուիլով, ինչպէս յիշեցինք ի վերեւ, արքունիկէց եղաւ եւ աստուծոցաւ իր հայրենի տունը ուր եւ մեռաւ 733ին: Կոստանդին Կոմպոսիլոսիսեան գումարուած պատկերամատուցութեան ժողովին մէջ (754) բանտարկուեցաւ կարի անագան, միջնորդ է. Ժողովը (787) պատկերներու խնդրոյն մէջ հակառակ ընթացք բռնելով հանդերձ՝ բարձրագոյն գովեստ-

ճառը հարցուց . յետոյ սկսաւ ինչ ինչ հարցումներ ընել անոր հաւատքի վերաբերութեամբ, և տեսնելով անոր անպարտելի իմաստութիւնը՝ հիացաւ և թուղթ մը գրեց Հայոց ուղղուած հաւատոյ մասին՝ որուն սկզբնաւորութիւնն է «Քրիստոսէ խաղաղութիւն մեր», և կնքելով իր մատանիով տուաւ Ստեփանոսի որ տանի Հայաստան:

Հստ պատմչին՝ ո՛չ միայն Գերմանոս ալ և կայսրն ինքնին լսելով Սիւնեցւոյն իմաստութեան համբաւը, կը կանչէ զնա և հաւատքի վերաբերմամբ հարցումներ կ'ընէ անոր . և Ստեփանոս ամենայն համարձա-

նեռն արժանի նկատեց անոր յիշատակը: Ճոխ մասնագրութեան մը պակասութիւնը կը քայքայէ մեզ ընդունիլ սա պարագան քե Գերմանոսի գրութեանը: Լեւոն Խաւարցւոյն հրամանովը այրուած ըլլան: Փոս (պատիար) իր ժամանակ կը յիշատակէ Գերմանոսի մէկ վիճարանական գրութիւնը Ռիդեմեքի եւ Գրիգոր Նիւսացիի վերահաստատութեանը մասին: Փոս մեծ գովեստով կը խօսի այդ գրքի առաւելութիւններուն վրայ, ու կը ծրագրէ ընթացքն այն պատճառաբանութեամբ՝ ըստ որում Գրիգոր Նիւսացիի գրութեանը մէջ ընդմիջարկութիւններու տեղի ունեցած ըլլալը կը հաստատուի: Այս գործը կորուսած է. հակաճառական գրութիւն մ'ունի գրողացական ոճով խրճարագրուած՝ որ մարդկային կեանքի սահմաններուն վրայ Բարսեղի ունեցած տեսութիւնները կ'ընդլայնէ: Վարդապետական նամակ մը Հայեռուն ուղղուած՝ (վերոյիշեալը) ի Քրիստոս երկու քննութիւնները կը ներկայացնէ Արամասի՝ Գրիգոր Նիւսացիի եւ մասնաւորապէս Գիւրեղ Աղեւսանդաշտի համաձայն:

Իրեւն պատկերամատենութեան հակառակորդ մասնագիր մը՝ Գերմանոս արտակարգ տեղ մը գրաւեց: Այդ խնդիրին վերաբերեալ իր երեք նամակները պատմականապէս մեծ կարեւորութիւն ունին. սակայն աստուածաբանական արժեք մը չտեսնուի: Տիրող կուրսն ու կանոնի մոլորութիւններուն վերաբերմամբ խօսող այդ փոքր գրութեան մէջ, ուր Գերմանոս ինքնին ցաւ կը յայտնէ քե մասնագրական օժանդակ գրութեանը կը պակսին: Աշխոյժ գործունեութիւն մը կը պարզէր Գերմանոս իրեւն քննարակ մը: Իր ճանաչման մէկ խնդիրներ տեսնական տեսնելու եւ Ս. Կուսին վրայ խօսուած են:

Քիզանդական հոգեւորութիւնը ցոյց կուտայ անոնց մէջ իր քաղաքացական նշանները՝ գովասանական յորդանանութեան, հոգեւորական մեծերու քարոզում, եւ պատմական մեքի նուագութիւն: Krumbacher Քիզ. Մատգր. էջ 661:

Կուրծեամբ կը պատասխանէ կայսեր թէ «ո՛վ բարեբար արքայ՝ հրամայեա՛ զի բացցին արկեղք գրոցն զի ես գտանիցեմ անդ գիրս որ ցուցանեն զորպիսութիւն հաւատոյ ուղղափառ» . և նոյն հետայն հրամանաւ կայսեր կը բանան մատենադարանին դռները և Ստեփանոս կը գտնէ հոն նախնի Ս. Հայրերուն ուղղափառ հաւատքին վերաբերեալ ոսկետուփ մատեան մը և կը ներկայացնէ կայսեր՝ որ մեծապէս ուրախանալով կը հարցնէ թէ «Ի՞նչ Հօյեղդայս հաւատքը ունիք» . ու երբ կը պատասխանուի այո՛, այն ատեն հրաման կուտայ Ստեփանոսի որ երթայ ի Հռոմ և հոն ալ փնտռէ նմանօրինակ գիրքեր, ու եթէ գտնես, կ'ըսէ, կը խոստանամ ամբողջ աշխարհը ձեր կրօնքին դարձնել: Հստ պատմութեան Օրբէլեանի՝ Ստեփանոս յոյժ ուրախացած կ'երթայ ի Հռոմ և հոն ալ կը գտնէ առաջինին նման երեք գիրքեր՝ որոնք էին Կիւրղի գանձուց գիրքերը, Ս. Աթանասի մէկ գիրքը, ինչպէս նաև Ս. Եպիփանու մէկ գործը: Ստեփանոս ասոնք ամէնքը իր նախնի առած ճամբայ կ'ենէն Հռոմէն. բայց չուզելով նորէն Կ. Պոլիս դառնալ կը նաւէ դէպի Սաիա և կ'անցնի Դուբին:

Բոլոր այս պարագաները, Ստեփանոսի կայսերական գրատան մէջ ոսկետուփ մատեան մը գտած ըլլալը, կայսեր հրամանով Հռոմ գացած և հոն ալ նմանօրինակ գիրքեր գտած ըլլալը, և կայսեր ի տես այդ գրոց՝ որոնք նախնի Ս. Հայրերու վարդապետութիւնը կը պարունակէին՝ սքանչանալը և բովանդակ աշխարհին Հայոց կրօնքը ընդունել տալու խոստումը առաւել պնդեալ պատմութիւններ կը թուին ըլլալ: Վասն զի ինչպէս կարելի էր որ իր եկեղեցիին դաւանութեանը վրայ խորապէս համոզում գոյացուցած մէկը՝ ուրիշի մը իր եկեղեցիին դաւանութեանը վրայ խօսած և զայն ներկայացուցած միջոցին վայրկեանապէս փոխէր իր գաղափարը և նոյն իսկ խոստում տար ամբողջ աշխարհին կրօնքը ընդունել տալու:

Գալով այն վկայութեան՝ ըստ որում Ստեփանոս թարգմանած ըլլայ իրեն վերագ-

րուած գիրքերը՝ տարակոյս չկայ որ ճշմարտութիւն ըլլալէ չդադրիր. որովհետեւ մեր ձեռքը գտնուածները, ինչպէս Գերմանոսի թուղթին թարգմանութիւնն և ուրիշներ, արդէն ցոյց կուտան թէ ստուգիւ Ստեփանոս կատարած է այդպիսի աշխատութիւններ։ Իսկ անոնք որ կը յիշատակուին ի պատմութիւնէ և այսօր գոյութիւն չունին, ըստ ամենայն հաւանականութեան կրնան կորսուած ըլլալ տգէտ ժամանակներու անզգուշութենէն։

Զիարդ և իցէ, Ստեփանոս գրեթէ տասնեւհինգէ աւելի տարիներ (711-726) է. Պոլիս կենալէ վերջը, ա՛լ չուզեց հոն մնալ, և փախաքեցաւ երթալ Հայաստան, թերեւս մէկ կողմանէ հայրենիքի կարօտովը տոյրած, և միւս կողմանէ իրեն յանձնուած թուղթը Գերմանոսի պատուէրին համաձայն տեղը տանելու համար, իր հետը բերելով այն գիրքերը զորոնք թարգմանած էր ի Կ. Պոլիս։

Օրբւիւնանի ըսածին հետեւելով՝ Ստեփանոսի բացակայութեան միջոցին բոլորովին կերպարանափոխ եղած էր աշխարհը Արարացւոց բռնութիւններուն և հարստահարութիւններուն երեսէն։ Արարացւոց ուստիկանը՝ Կաշմ՝ խարդախութեամբ Նախըււանի եկեղեցիին մէջ ժողոված բոլոր հայ մեծամեծները, թուով իբր 800 հոգի, կրակի տուած էր զայն։ Դուինն ալ՝ որ ինքզինքը սկսած էր պաշտպանել՝ պատերազմով զրաւուած էր և նորանոր արիւնահեղութեանց թատր դարձած ⁽¹⁾։

Եղիա Արճիշեցի որ Կաթողիկոս էր Ստեփանոսի ուսումնական ուղեւորութեանը ժամանակին՝ վախճանած էր արդէն, և անոր յաջորդած Յովհան Օձնեցի։ Սա ալ քիչ ժամանակէն վախճանած ըլլալով իր տեղը յաջորդ ընտրուած էր Դաւիթ Արաւմոնեցի։ Ստեփանոս ներկայացաւ ասոր՝ որ մեծ պատուով ընդունեց զինքը, և յանձ-

նեց ի միջի այլոց այն թուղթը զոր Գերմանոս գրած էր և կնքած իր մատանիով։ Ի հարկէ պատմեց նաև մանրամասնօրէն իր Կ. Պոլիս ապրած կեանքը, թէ ի՞նչ բաներ անցան իր գլխէն երբ առաջին անգամ ոտք կոխեց հոն, և թէ ի՞նչ դէպքեր տեղի ունեցան իր հոն գտնուած միջոցին որոնց ինք ականատես եղաւ. պատմեց նաև Գերմանոսի Հայոց ուղղուած թուղթը գրելուն շարժառիթը։ Ստեփանոս կարդալէ և հասկըցնելէ վերջ անոր պարունակութիւնը, թարգմանեց և յանձնեց Կաթողիկոսին և անոր հրամանովը գրեց նաև այդ թուղթին պատասխանը որ կը սկսի սա տողերով. «զՔրիստոսի խաղաղութիւնն առաւելելով»։

Ստեփանոս ոչ միայն պատիւ գտաւ Դաւիթ Կաթողիկոսէն՝ այլ նաև բոլոր իշխաններէն և մասնաւորապէս Սիւնեցիներէն՝ որոնց վարժապետը եղած էր երբեմն։ Եւ որովհետեւ ասոնց եպ. Ծովհան՝ յաջորդն Անանիայի, վախճանած էր, Ստեփանոսի նկատմամբ իրենց ունեցած ճշմարիտ սիրոյն և համակրանայ զրաւական մը ցոյց տալու համար Բարդէն և Քուրդոյ Սիւնեաց իշխանները խնդրեցին Կաթողիկոսէն որ Ստեփանոս իրենց եպ. ձեռնադրուի։ Կաթողիկոսը ո՛չ միայն եպ. ձեռնադրեց զՍտեփանոս՝ այլ և ի վարձ անժխտելի արժանեաց, շնորհեց անոր մետրապոլիտութեան պատիւը, և գլխաւոր ըրաւ զանի Սիւնեաց բոլոր եպ. ներուն։ Նմանապէս Սիւնեաց եպ.ութեան աթոռը որ մինչև այն ատենը եօթներորդ կը սեպուէր եպ.ութիւններու կարգին մէջ՝ երրորդ կարգին բարձրացուց։

Ստեփանոս այս կերպով գործունէութեան աւելի ասպարէզ մը գտաւ իր առջեւը բացուած. եռանդեամբ փարեցաւ իր գործին, և իր ժողովրդին բարւոյն և օգտին համար ամէն տեսակ զոհողութիւններ յանձն կ'առնէր. հովուական այցելութիւններ կը կատարէր աշխարհին ամէն կողմերը, քարոզելով և խրատելով ժողովուրդը. միւս կողմանէ ձեռքէ չէր ձգեր նաև զրական աշխատութիւնները, հեղինակելով Ս. Դրոց վերաբերեալ զրաւոր մեկնութիւններ և շարականներ։

(Շարունակելի)

ԵՂԻՇԷ Վ. ԽԱՅԵՐԵԱՆ

(1) Պատմիկն յառաց րեւած այս դէպքերը՝ անշի կանուի ժամանակի մը մէջ պատահած են 704-5 թուականներուն, բայց ինքը երկրին վիճակը ցոյց տալու նպատակով հոս զեօեղած է զանոնք, իսկ մեզ հաւանաբար այդ աղեղններուն ծագօք երկանիստ Սիւնեցիին։

ՕՏԱՐ Ե ԶԵՐ

ՀՈԳԻ ԵՒ ՆԻՒԹ

Նիրապապոյ լատեկաւիս

Առանց պատճառի արդիւնք չըլլար ոչինչէն բան մ'առաջ չգար: Ասոնք առածներ են, այսինքն անժխտելի ճշմարտութիւններ: Արդ, որովհետեւ մեր իւրաքանչիւրին մէջ կը հաստատուի ոյժերու, կարողութիւններու գոյութիւնը, որոնք նիւթեղէն չեն կրնար նկատուիլ, անոնց պատճառը բացատրելու համար, անհրաժեշտ է դիմել տարրեր աղբիւրի մը, այն աղբիւրին՝ զոր կը կոչենք հոգի:

Երբ, մեր խորն իջնելով, ուղենք ինքզինքնիս ճանչնալ և վերլուծել մեր կարողութիւնները, երբ վերցնենք մեր հոգիէն այն փրփուրը՝ զոր կեանքը կուտակած է հոն, — թանձր ծածկոյթը՝ որու նախապաշարումները, մոլորումները, իմաստականութիւնները պատած են մեր իմացականութիւնը, — և մեր էութեան ամէնէն ներքին ծալքերուն թափանցենք, մենք զմեզ դէմ առ դէմ պիտի գտնենք այն բարձր սկզբունքներուն, առանց որոնց չկայ մեծութիւն մարդկութեան համար, — բարւոյն սէրը, արդարութեան և յառաջդիմութեան զգացումը:

Սոյն սկզբունքները՝ որոնք զանազան աստիճաններով կը գտնուին այնքան տգէտին որքան հանճարեղ մարդուն քով, չեն կրնար առաջ գալ նիւթէն, որ զուրկ է այդպիսի յատկութիւններէ: Ու նիւթն երբ չունի այդ յատկութիւնները, ինչպէ՞ս պիտի կրնար յօրինել ինքնին էակներ, որոնք անոնցմով օժտուած են:

Գեղեցիկին և ճշմարտին զգացումը, սքանչացումը՝ զոր կը զգանք մեծ և սգունիւ գործերու հանդէպ, մեր անդամներու մէջ, մեր երակներու արիւնէն տարբեր ծագում մը պիտի կրնային ունենալ: Ասոնք աւելի կը նմանին ցոլքերուն բարձր ու մաքուր լոյսի մը, որ կը փայլի մեր իւրաքանչիւրին մէջ, ինչպէս որ արեւը կը ցոլայ

ջուրերու վրայ, թէպէտ այդ ջուրերն ըլլան պղտոր կամ յստակ:

Իզո՞ւր պիտի պնդուէր թէ ամէն ինչ նիւթ է:

Ի՞նչ, սիրոյ և բարութեան բուռն թափ մը զգանք, սիրենք առաքինութիւնը, անձնութիւնը, դիւցազնութիւնը, բարոյական գեղեցկութեան զգացումը քանդակուած ըլլայ մեր մէջ, իրերու և օրէնքներու ներդաշնակութիւնը մեզ թափանցէ, զմեզ դիւթէ՞, ու այս ամէնէն ո՞չ մէկ բան չզանազանէ՞ զմեզ նիւթէն:

Զգանք, սիրենք, խիղճ, կամք, միտք ունենանք և առաջ գանք պատճառէ մը, որ չունի սոյն յատկութիւնները ո՞չ մէկ աստիճանով:

Պատճառէ մը՝ որ չլզար, չի սիրեր, որ ոչինչ կը ճանչնայ, կոյր և համր է:

Կարելի՞ էր որ աւելի բարձր, աւելի կատարեալ և լաւագոյն ըլլայինք քան այն ոյժը, որ զմեզ արտադրած է:

Մարդն իր մարմնով և գործարաններով առաջ կուգայ նիւթէն, իմացական և բարոյական կարողութիւններով առաջ կուգայ հոգիէն:

Մարդկային մարմնի սոյն հիմնալի միջնան կազմող գործարանները կը նմանին այն անիւներուն, որոնք անկարող են գործել առանց շարժիչ ոյժի մը, առանց կամքի մը՝ զանոնք շարժման մէջ դնող:

Հոգի՞ն է այդ շարժիչ ոյժը, որ կը բնակի նիւթին մէջ, ինչպէս բանտական մը իր մենախուցին մէջ: Զգայարանքներն այն բացուածքներն են, որոնցմով կը հաղորդակցի ան արտաքին աշխարհին հետ: Սակայն, մինչ նիւթն ուշ կամ կանուխ կը պակսի և կը կազմալուծուի, հոգին կ'աճի կարողութեամբ, կը զօրանայ դաստիարակութեամբ և փորձառութեամբ: Իր ըղձանքները կը մեծնան և կը տարածուին չիրմէն անդին. գիտնալու, ճանչնալու, ապրելու իր պէտքն անսահման է:

Մարմնի մուրացածոյ հագուստ մըն է լոկ, վաղանցիկ ձև մը, հանդերձանք մը, որու միջոցաւ հոգին այս աշխարհին մէջ կը հետապնդէ իր գործը մաքրագործման և յառաջդիմութեան: Հոգեկան կեանքը՝ կրանոնաւոր ճշմարտ, անկասկածան կեանքն է:

Իւնեկ

Թրգմ. ԱՐԱՄ ՀՈՒՍԱՐԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԶԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ

(Շար. Նախորդ թիւին)

Այս միջոցներուն (1877) Արիստակէս Յովհաննէսեան իր տարիքին հասունութեան և աշխատութեան բնուն տակ ընկճուած, միւս կողմէ տեսնելով որ իր երկար ժամանակեայ աշխատասիրութիւնը ցուրտ ընդունելութեան մը արժանացաւ Երաժշտական Յանձնաժողովոյ մէջ, ուր մեծամասնութեամբ հակառակած էին ժողովականք իր դրութեան դէմ, սկսաւ վհատիլ: Հաստատ համոզում գոյացուցած էր՝ թէ այսքան անձնուէր կերպով մինչեւ ծեծութեան հասակը Ազգին ծառայելէ ետք յարատեւ յարգանք պիտի տեսնէ իր անձին նկատմամբ. սակայն երբ վերջին աննպաստ պարագաները տեղի ունեցան, ահա առնալ միայն կրցաւ հասկնալ չարաչար սխալած ըլլալը: Աւագ, յանցանքն իրը չէր, այլ տարիքին. փառքի գազաթնակէտն հասած էր, ուստի ճամբան չարունակելու համար՝ վար իջնելէն ուրիշ ճար չկար:

Արդարեւ մեր Ազգին մէջ ե՞րբ տեսնուած է վարժապետ մը՝ որ լիութեան մէջ ապրած ըլլայ մինչեւ իր կենաց վախճանը: Զբաւորութիւնն է և պիտի ըլլայ բոլոր ազգին ծառայողներուն ճակատագիրը: Մեր անդուգական երգիծաբան Յակոբ Պարոնեան չա՛տ իրաւամբ ըսած է իւր Ազգային Ջոջերուն մէջ. «Աստուած դասատուն ստեղծեց, գաղափար մը տալու համար մեզի թէ մարդս քանի՞ օր կրնայ անօթութեան դէմ մաքառիլ»:

Արիստակէս Յովհաննէսեան ակամայ համակերպելով այս անողոք ճակատագրին, վերջին տարիները թշուառութեան մէջ անցուց զրեթէ: Դժուար ըլլալով իրեն՝ ամէն օր երթեւեկել Մայր Եկեղեցիէն ի Լանկա-Պոսթանի, մանաւանդ ձմեռ ատեն, հարկադրուեցաւ բոլորովին մեկուսանալ Եկեղեցւոյ յարակից Ուսումնարանը՝ ուր մինչեւ վերջ կը դասախօսէր չափահաս

դպիրներու, միայն չարթուան մէկ երկու օրը տուն երթալով: Օր մըն ալ իմացանք թէ ծանր հիւանդութեան մը ենթակայ ըլլալով ստիպուեալ են իր բնակարանը առաջնորդել զինքը, ուր հալիւ քանի մը օրուան կեանք ունեցաւ, և 1878 ապրիլ 13ի Աւագ Հինգշաբթի երեկոյին կնքեց իւր մահկանացուն:

Հանգուցեալը ամուսնացած էր Եղաճեան Յակոբի դուստր՝ Լուսիա (+ 1891) օրիորդին հետ, որմէ ունեցած էր երեք զաւակ՝ որք են Էպրու (Տիկին Գ. Իսաւ վէրտեան մեռած 1890ին), Յովհաննէս Շալճեան, (որմէ բաւական օգտուեցանք՝ իր քրտնաջան աշխատութեամբ հաւաքած Հայ երաժիշտներու կենսագրութեանց զիմեղով երբեմնակի) և Յուստիանէ (Տիկին Ն. Տարխանեան):

Յովհաննէսեանի աշակերտները փափաքելով որ իրենց վարպետին լուսանկարը հանել տան, Ս. Հրեշտակապետաց գաւթին մէջ անշուշտ դիտել բաղմնեցին թիկնաթոռի մը վրայ, և իրենք ալ անոր շուրջը բոլորուած՝ նկարել տուին բաղմարդին ուսուցչին պատկերը, որ թէկէ անկենդան վիճակի մէջ՝ բայց առ ի չգոյէ լաւագուցին բաւական գոհ ըրաւ իւր յիշատակը յարգողները: Ատկէ ետք էր որ սկսաւ կատարուիլ հանգուցեալին յուղորկաւորութիւնը՝ Աւագ Ուրաթ ցորեկ Մայր Եկեղեցւոյ մէջ, ի ներկայութեան խուռն բաղմութեան, և ամբողջուեցաւ Պալլադի Ազգ. գերեզմանատունը:

Տ. Ներսէս Պատրիարք Վարժապետեան՝ սաստիկ յուզուած՝ սքանչելի դամբանական մը խօսեցաւ, և ակնարկելով հանգուցեալին՝ իւր երկնաւոր Տիրոջ հետ միենոյն օրը թաղման արարողութիւնը կաթարուելուն, «Բառասո՛ւն տարի, ըսաւ, նկեղեցեաց մէջ երգեց և զԱստուած փառաւորեց. թող այսուհետեւ Երկնից մէջ հրեշտակաց հետ ձայնակցելով յաւիտեանս երգէ և փառաւորէ զԱստուած»:

Այս առթիւ ցաւելով կ'ըսենք թէ Մայր Եկեղեցւոյ Դպրաց դասը՝ որ վերոյիշեալ պատկերին վաճառմամբ գոյացած հասոյթը պիտի յատկացնէր իրենց երաժշտապետին

թաղուած տեղը շիրիմ մը կանգնելու, ոչինչ կրցաւ ընել ցարդ. բայց ասիկա դեռ բան մը չէր բաղդատմամբ հտքի ընելիքներուն:

Հանգուցեալին մահուրնէն քանի մը ամիս վերջը Մայր Եկեղեցւոյ Դպրաց դասը իմանալով որ Արիստակէս Յովհաննէսեանի հեղինակութիւններէն մաս մը իմ քով կը գտնուի, (տե՛ս զլուիս Գ.) լուսարարարապետ Տ. Սուքիաս քահանայի միջոցաւ կը պահանջէ ինձմէ այդ ձեռագիրները, առարկելով թէ դանոնք տպագրել տալէ յետոյ Պատր. շրջաբերականով մըն ալ մեծամեծներու պիտի դրկէ մէյմէկ օրինակ և անոնց հասոյթը յատկացնէ իր որդոցը: Այս խօսքերը լսելով վարանեցայ տալու, վանդի չա՛տ աղէկ գիտէի այսպիսի ուռուցիկ խոստումներուն իրական արժէքը:

Կարճ տեսակցութենէ մը հտքը հաստատուեցայ կատկածներու մէջ, և վրձնաբար պատասխանեցի.

—Տէ՛ր Հայր, ձեզ զրկողներուն կրնաք պատասխանել թէ վարդեափա ձեռամբ ինձ աւանդուած գրութիւններէն և ո՛չ իսկ թղթի կտոր մը ձեզ յանձնելու մտադիր եմ:

Տ. Սուքիաս քհ. Ստեփանեան թէեւ շատ աշխատեցաւ իմ յամառութեանս յաղթելու, բայց տեսնելով որ իր խօսքերն անօգուտ են, յուսախաբութեամբ հտ դարձաւ:

Ի վերջոյ Պատուարժան Դպրաց դասը տեսնելով որ սպառնալեօք չպիտի կրնայ ձեռք ձգել իր սպասածը, տարբեր միջոցի մը դիմեց: Ոսկեզօծ խոստումներով համոզեց հանգուցեալին այրին՝ Տիկին Լուսիկ Շալճեանը, որ եթէ այդ ձեռագիրներն իրենց տրամադրութեան տակ ըլլայ, ապագային երբէք նիւթականի հոգ չպիտի ունենան զաւակները: Յարգելի Տիկինը այս համոզմամբ առգորուած ինձ կը դիմէ, զի՛ս ալ համոզել կը ջանայ, բայց տեսնելով որ իր խանդավառութեան չեմ մասնակցիր, կը յաւելցնէ որ գէթ իր սիրոյն համար յանձնեմ զանոնք: Այս կերպ առաջարկութիւն մը չէի կրնար մերժել, քանի որ անոր նկատմամբ որդիական սէր մը կը տածէի,

ըստ որում տղայ հասակէս կորսնցուցած ըլլալով մայրս, Տիկին Լուսիկ Շալճեանի խնամոտ ձեռքերուն ներքեւ մեծցած էի, մայրական գութգութքով. հետեւաբար առա՛նց վայրկեան մը իսկ մտածելու՝ անմիջապէս յանձնեցի մեծանուն վարպետիս բոլոր գրութիւնները, չպահելով դո՛նէ փոքրիկ ձեռագիր մը՝ իբր յիշատակ:

ԱՐԻՍՏԱԿԷՍ ՔԷ. ՀԻՍՏՐԵԱՆ

(Շառունակելի)

“ԴԺԲԱՒՏ ՀԱՆՃԱՐ,,Ի ՄԸ ՇԻՋՈՒՄԸ

Ա. Զ. Ա. Զ. ՈՒՐԿ

ԹԱԴԷՈՍ ՊԱՏՈՒԵԼԻ ԿԷԶԻՒՐԵԱՆ

Սերաստիայէն հասած նամակներ կը գուժեն Տաճարի Տնօրէն Խմբագրին հօրը՝ Ա. Զ. Ա. Զ. ՈՒՐԿ ԹԱԴԷՈՍ ՊԱՏՈՒԵԼԻ ԿԷԶԻՒՐԵԱՆԻ մահը: Հանգուցեալը անձանթ մը չէր Պոլսահայերուն, երեսուն տարիի չափ առաջ եկած ըլլալով Պոլիս, և բաւական ժամանակ տպրած այստեղ, Ծնած 1838ին, վեց ամսուան տղեկ մը եղած ատեն կորսնցուցած էր աչքին լոյսը, և սակայն, հակառակ ատոր, իր արտասովոր ուշիմութեան և սուր յիշողութեան շնորհիւ տղայ հասակէն սկսաւ զարգանալ՝ իր ժամանակի «պատուելի»ներու խնամքին տակ, ուսանելով հայերէն գրաբար լեզուն, յետոյ ֆրանսերէն, պարսկերէն, արաբերէն: Թուարանութեան և Ալճէպրայի ջերմ սիրահար մը եղած էր, և մտաւոր հաշիւով կը լուծէր ալճէպրայական այնպիսի կնճռոտ խնդիրներ որոնց յաճախ բաց աչք ունեցողներ չէին կրնար մօտենալ: Հմուտ հայ պատմութեան, ծանօթ ու սիրահար հայ հին մատենագրութեան, մանաւանդ Ս. Գրքին, Հայ Եկեղեցւոյ վարդապետութիւնները հիմնովին ուսումնասիրած, Եկեղեցւոյ չարականներն և արարողութիւնները գաղտնիք չունէին իրեն համար: Ծանօթներ և անձանթներ հիացումով կ'ունէին հակառակէն մէջ իր հաւանդ եր-

գեղեցիկության, և մանաւանդ ծաշու երկար Գիրքերու գոյ արտասանութեան, առանց կէտ մը, նշանախեց մը մոռնալու: Բայց ամէնուն ուշադրութեան առարկայ դարձած այդ յատկութիւնները շատ պզտիկ կը մնային իր բուն արժանիքին քով: Ինչ որ ուսած էր իր այդ կոյր վիճակին մէջ, լաւ և հիմնաւոր կերպով ուսած էր: Զուժակը զոր պզտիկ հասակէն իրեն ընկեր ըրած էր, կատարելագործեց Պոլսոյ մէջ, օգտուելով նշանաւոր ձայնագրագէտ Լեւոն Էֆ. Ուանճեանի բարեյօժարութենէն: Իր այս բազմակողմանի յատկութիւններով հանգուցեալը յաջողած էր մեծ յարգանք և համարում վաստակիլ հայ և օտար շրջանակներու մէջ: Մեծ Պատրիարքը, Ներսէս Վարժապետեան, չէր վարանած զինքն Հոմերոսի և Միլտոսի նմանցնելու. Տքդ. Թիրեաքեանի «Եզական պատուելի»-ն էր ան, և Կարապետ Իւթիւճեան ամենօրեայ Մախիւսն մէջ «Իժմախո հանճար մը» հրուշակած էր հանգուցեալը: Վսեմ. Ահմէտ Միտհադ Էֆ., թուրք գրականութեան այդ մեծ ներկայացուցիչը, հիացումով կը վերաբերուէր հանգուցեալին հետ, ունկնդրելով անոր ինքնագիր դագէշներուն, և հմայուելով անոնց թէ՛ բանաստեղծական և արուեստի բարձրութենէն և թէ՛ երգեցողութեան գեղեցկութենէն:

Կարելի չէ սակայն հակիրճ տողերու մէջ ամփոփել իր կեանքը: Յիշենք միայն թէ Աստուծոյ իրեն պարգեւած ձիրքերէն՝ հանգուցեալը կրցած է բաժին հանել իր համայնքին: Երկար տարիներ պաշտօնավարած է Սեբաստիոյ Թարգմանչաց Մայր Վարժարանին մէջ՝ իբրեւ հայկաբանութեան ուսուցիչ, և ուրախ ենք հաստատելով որ Սեբաստիան իր մտաւոր զարթոնումին մէջ շատ բան կը պարտի անոր: Սեբաստիոյ զարգացեալ դասակարգին պատկանողները՝ ընդհանրապէս՝ կա՛մ իր աշակերտներն են, և կա՛մ իր աշակերտներու աշակերտները: Դրականութեան մէջ ալ ունեցած է համեստ բաժին մը, թարգմանաբար հրատարակելով նախ Ֆենիկոսի «Առակ»ները, և յետոյ Տքդ. Սաֆրէյի «Երկար ապրելու միջոցները», զոր զար-

գարած է մեծանուն գրագէտ-քիչկ Տքդ. Թիրեաքեան Էֆ.: հոյակապ յառաջաբանով մը: Թերթերու և հաւաքածոներու մէջ հրատարակուած են իր գեղեցիկ քերթուածներէն ոմանք: Ասոնցմէ դատ ունի անտիպ ինքնագիր կարեւոր քերթուածներ, թարգմանութիւններ ևն., որոնց հատորի մը մէջ ամփոփուածը բաղձանքն է թերթիս անօրէն-խմբագրին:

Յուզարկաւորութիւնը կատարուած է Սեբաստիոյ մայր եկեղեցւոյն մէջ, նախագահութեամբ Գեր. Տ. Շաւարշ Վ. ի, և ի ներկայութեան քաղաքին ամբողջ եկեղեցականութեան, մտաւորական դասուն և ստուար բազմութեան: Դագաղին վրայ ծաղկեփունջեր դրուած են Թաղ. Սորհուրդէն, Հիւանդանոցէն, Որբանոցէն և ուրիշ ազգային Հասարակութիւններէ: Դամբանականներ խօսած են Գեր. Տ. Շաւարշ Վ. Սահակեան, Արժ. Տ. Կրօնիդէս Քհնյ. Նալպանտեան, և Ազն. Տիար Դանիէլ Վարուժան: Հուսկ ուրեմն մարմինն ամփոփուած է Կէզիւրեանց գաւառաւորին մէջ այն «Քառասուն Մանուկ»-ին (*) ուր իր հուսկ հանգիստը քնանալ երազն եղած էր այս «ըժմախո հանճար»-ին:

Վշտակիր Զարմայր քհնյ. Կէզիւրեան, երիցուհին, դուստրը, և Կէզիւրեան գերդաստանի անգամք (Պոլիս և Սեբաստիա) ղգածուած սրտով խորին շնորհակալութիւն կը յայտնեն Սեբաստիոյ եկեղեցական դասուն, պաշտօնական մարմնոց, մտաւորականութեան և ամէն անոնց, որ ողբացեալ ԱԶՍԶՈՒՐԿ ԹԱԴԵՈՍ ՊԱՏՈՒԵԼԻ ԿԷԶԻԻՐԵԱՆԻ յիշատակն այնքան մեծ յարգանքով շրջապատեցին, նաև ամէն անոնց որ բանիւ կամ գրով իրենց ցաւակցութիւնն յայտնեցին այս տխուր առթիւ:

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Ռուստուգէն Տիար Գրիգոր Ասլանեան 1 օրինակ տարեկան Տաճար նուիրած է նոյն քաղաքի Ս. Մեսրոպեան վարժարանին:

(*) Այսպէս կը յորջորջուի Սեբաստիոյ Հայոց գերեզմանատունը:

ԽՂՃԱՍԻՏ ՊԱՇՏՈՆԵԱՆ

Երբ սովորութիւն ըրած ենք քահանայները ինկած նկատել, զանոնք իբր սիմոնական ցուցնել, երբ կը բամբասենք թէ անոնք մկրտութիւնը, պատկը, մեռել-թաղը սակարկութիւններով կը կատարեն, թէ՛ անոնք վերջապէս մամոնային կը ծառայեն և ո՛չ թէ իրենց կոչմանը. միւս կողմէ կոյր կը պահենք մեր բաց աչքերը, կը խփենք մեր խղճին աչքերը, կը լռեցնենք անոր ձայնը, որպէս զի չտեսնենք ու չստիպուինք պաշտպանել նաև քահանային իրաւունքը: Բարեբրդի Խայիք գիւղէն Տ. Տաճատ քահանայ Պոլիս մնաց վեց ամիս և ողիսատեցաւ բառնալ իր հօտին վրայէն ծանր բեռը պարտուց, որ կ'ընկճէր զայն անիրաւ տոկոսներու բարդումով, ջանաց և յաջողեցաւ 200 ֆսկիի փոխառութիւն մը կնքել տալ պանքային և իր գիւղին միջև, հայուն և թուրքին արտերուն սերմնոցու հայթայթելու համար: Տ. Տաճատ ապրիլին դարձաւ հայրենիք. նա չպահանջեց մեծ ծախքեր իր ճամբորդութեան համար. մինչդեռ 20 սկի ծախք եղած էր երթեւեկութեան մէջ, և այդ գումարը գանձեց իր ընկերը՝ Տիգրան՝ քահանային մէկ սկի միայն տալով: Տ. Տաճատ կ'ըսէ որ «այս է իմ վարձատրութիւնը»: Այս կարճ նախադասութեան մէջ թէպէտ յսնդիմանական լին չեւտ մը կը կենայ, բայց ո՛չ գեղեցիկութեան: Տ. Տաճատ հողեր չունի, ժողովրդէն չէնքչնորք իրաւունք ըսուած բանն ալ չի կրնար ընդունիլ, վասն զի չեն տար: Նա զաւակներ չունի, բայց կը գուրգուրայ իր եղբորորդւոցը վրայ զորս Պոլիս վարժարան գրած է. աղքատ է Տ. Տաճատ նիւթապէս, բայց հարուստ է բարոյապէս. առատաձեռն է, իր կարօտ վիճակին մէջ ո՛չ միայն եղբորորդւոցը, այլ և գիւղին աղքատներուն կ'օգնէ: Ի՞նչ է այս գաղտնիքը, ինչէ՛ն է որ աղքատ քահանայ մը որուն նմանող ուրիշներն արդարեւ ինկած են, ինքը չինկար և ինկածներուն ձեռք կ'երկարէ որ ելլեն. ի՞նչ է գաղտնիքը. արդեօք ժամանակին պահճու դրամ

ունի: Բայց ո՛չ, ո՛չ և ոչ: Տ. Տաճատ խղճամիտ պաշտօնեայ մըն է, իր պարտուց կատարման կը հետեւի. և ահա Աստուած կը յաջողէ անոր:

Տ. Տաճատ մօտ օրէն վերստին Պոլիս կը դառնայ իր հօտին պարտուց խնդիրը լուծելու վերջնապէս, զոր թերի ձգած էր ստիպողական պահանջումի մը երեսէն:

Մեր միւս քահանայները օրինակ թող առնեն այս իրենց կարգակիցը, որ իրենց մէջ ամենէն աղքատն է. մինչդեռ իրենք նիւթական ամէն միջոց ունին, և սովայն գանգատ է որ կը համի իրենց զօշտքաղութեան մասին:

Բարեբրդ

Մ. ՍԱՆՈՍԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ԿՐԾՆ. ԺՈՂՈՎԸ ԴՆ. Ի նիստին մէջ ուրոյած է, դպրոցական նոր տարեշրջանի աւթիւ, շրջաբերականով մը հարցնել թաղ. Խորհուրդներուն թէ իրենց վարժարաններուն կրօնական ուսուցիչներ կարգած են եւ որո՞նք են: Ժողովը որոշեց յառաջիկայ նիստը ամբողջովին նուիրել եկեղեցական Համագումարին գործառնութեանց եղանակին վրայ խորհրդակցելու, և տեղեկաբեր մասնախումբ մը կազմելու:

* Կրօն. Ժողովոյ անդամներէն Տ. Տ. Սուքիաս Պալլաճեան, Խորէն Յարութիւնեան և Արէլ Երէցեան քննաք եկեղեցական բարեփոխմանց հետեւեալ առաջարկները ներկայացուած են Կրօն. Ժողովոյ անցեալ շաբթուան նիստին. — Անձնասպան եղողներուն՝ հասարակ մեռելայններու պէս թաղում կատարել, նկատելով որ անձնասպանները՝ ըստ բժշկական օրինաց՝ իրենց մաաւորական սովորական վիճակը կորսնցուցած կ'ըլլան: — Մեծ Պահոց օրերէ գատ, բոլոր օրերուն մէջ պսակ կատարել: — Այլ ընացեալ քահանայներու կրկնամուսնութեան հրաման տալ: — Պատկները միայն կիրակի կէս օրէ վերջը կատարել: — Երկուցուհեաց վերամուսնութիւնը արտօնել: — Իրենց ամուսինէն լքուած կիները՝ որոշեալ

ժամանակէ մը ետքը արտօնել ուրիշի մը հետ ամուսնանալու: —Արարողութիւններէն շատերը կրճատել, և կրկնութիւնները վերցնել: —Բարեւոք պաշտօնավարութիւն ունեցող քահանաներուն վարձատրութեան միջոցներ խորհիլ:

* Կրօն. ժողովը անցեալ շաբթուան նիստին մէջ տաանեւհինգօրեայ փրկման գրկութեան ենթարկել է Մայր-Եկեղեցւոյ Տ. Գէորգ քհ. Պապականը, որ գաւառացի մը պատկած էր, առանց ստուգելու անոր ամուրի ըլլալը, և յետոյ հաստատուած էր որ այրը գաւառի մէջ ամուսնացած էր:

ԽԱՌՆ ԺՈՂՈՎԸ՝ ԴՆ. Նիստին մէջ՝ վեր. Հայրապետին մէկ հեռագրին վրայ որով հրամայած էր որ եպիսկ. ձեռնադրութեան ընծայացու վարդապետները ուղեւորին Էջմիածին. որոշեց՝ առին հրամանն հաղորդել անոնց, փութով ճամբայ ելլելու համար դէպի Ս. Էջմիածին, քանի որ առայդ հարկ եղած պաշտօնական գործողութիւնները կատարուած են: —Ժողովը մերժեց Երուսաղէմի տեղապահական խորհրդական Տ. Տրդատ Սրբազանի հրաժարականը, և որոշեց յանձնարարել որ ընդդիմադիր միաբաններու անունն հաղորդէ: —Արդընի-Չնքուշի առաջն. տեղապահ անունանց Տ. Յովհ. Վ. Յակոբեանը: —Ուսուցչի (Ամերիկա) հոգեւոր պաշտօնեայ անունանց Տ. Մատթէոս քհնյ. Մանրկեանը: —Հաստատեց Զարանձագի Կրօն. և Բաղ. ժողովներու ընտրութիւնը, նաև այնտեղի առաջնորդի ընտրութիւնը, յանձին Տ. Եղիկէլ Ծ. Վ. Արշակունիի: —Անընդունելի նկատեց Կեսարիոյ Գաւառ. ժողովին ընդդէմ առաջնորդ Տ. Տրդատ Սրբազանի ամբաստանագրի եղբակցութիւնը, և որոշեց՝ իբր պարզ ամբաստանագիր, նոյն գիրն հաղորդել Ն. Սրբազնութեան և բացատրութիւն ուղել: —Որոշեց հրաւիրել Բաբերդի առաջն. տեղապահ Տ. Անանիա Վ. Հաղարապետեանը, որ փութով մեկնի իր պաշտօնատեղին: —Ժողովը կարգալով գաւառներէ ոմանց մէջ պատահած կրօնափոխութեանց առթիւ տեղի ունեցած անկանոնութեանց մասին ըստ որոշման պատրաստուած թագրիբը, որոշեց մատուցանել զայն: —Ժողովն որոշեց Տէվրէկ-Համարիէի մէջ ազգ. սեփականութիւն եղող գետնի մը մէկ մասին վրայ քանի տարիներ առաջ բռնութեամբ կառավարական շէնքեր շինուած ըլլալու պարագան թագրիբով մը

հաղորդել Բ. Դրան, պահանջել գրաւեալ գետնին արժէքը, և խնդրել նոյն վաղեմի ազգ. սեփականութեան իրաւունքին պահպանումը:

Ս. ՊԱՏՐԻԱՐԻ ՀԱՅՐԸ՝ նոր դիմումներ ըրաւ ԳՂ. օրը զանազան նախարարութեանց: Ելմտական նախարարին խօսեցաւ Ատանայի որբերու և կարօտելոց համար քուէարկուած նպաստին համար, որ նպաստաւոր կարգադրութեան մը պիտի կրնայ յանգիլ: Դատական նախարարին հետ տեսակցեցաւ Ազգ. սեփականութեան վերաբերեալ խնդրոց վրայ: Ներքին գործոց նախարարէն խոստում առաւ յառաջիկայ Պայրամին առթիւ ինկատ անելու Կիլիկիոյ բանտարկելոց խնդիրը: Ազգային Հիւանդանոցի անձուկ վիճակին առթիւ ալ, — հետեւանք հայի և մեր զեղչուելուն և վիճակահանութեան համար խնդրուած արտօնութիւնը չտրուելուն, — նախարարը խոստացաւ դարման մը գտնել այս վիճակին: Նախարարը խոստացաւ նաև յառաջիկայ տարիի Պիւտճէին մէջ հացագինի նպաստ մը նշանակել Գալֆանան որբանոցին ալ:

Կ Ա Ր Ե Ի Ո Ր

Բաժանորդներէն անոնց որ դեռ չեն լրկած իրենց բաժնեգինը, վերստին կը յանձնարարենք փութացնել իրենց հաշիւին կարգադրութիւնը. հակառակ պարագային քերթին առաջունը չի կրնար շարունակուիլ: Նոյնը առաւել եւս կը յանձնարարենք Պատ. գործակալներուն: Տարին լրջնալով վրայ է: Դրամի առաքման լաւագոյն միջոցն է մանսա-բօսը, ամէնէն պզտիկ գումարէն սկսեալ մինչև մեծագոյն գումարները: Թղթատարական փուլ զրկողները պէտք է 40 զրշ. փուլ զրկեն (և ոչ թէ 38 զրշ. փ), և առաւելապէս երկու փառանոց, որովհետեւ 20 կամ 40 փր. նոց փուլի այնքան պէտք չունինք, և այստեղի նամակատունները չեն փոխեր: Փոխանակագրով կամ Պոլիս այս կամ այն տեղէն գանձելու յանձնարարութիւնք դժուարութեանց կամ յապաղումներու տեղի կուտան:

ՍՐՏՈՆԱՏԷՐ

ՀՄԱՅՆԱԿ ԳԶՆԵ. ԷՐՍԷՐԸՆԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ԶԱՐՄԱՅԸ ԳԶՆԵ. ԿԷՋԻՐԵԱՆ


ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ
Զաւմահճըյար, Յակոբեան խան

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
CHICAGO, ILL.
1911

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
CHICAGO, ILL.
1911

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
CHICAGO, ILL.
1911

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
CHICAGO, ILL.
1911



ՍՏԱՅՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

ՀԱՇՅԱԿ ԱՐԴԻ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒ-
ԹԵԱՆ, ծաղկափայլ աշխարհաբար շեզուէ,
բազմաթիւ գրական կենսագրութիւններով
և ծանօթութիւններով: Աշխատասիրու-
թիւն Ա. Պիպեռնանի: Դ. Տպագրութիւն:

Խնամուած պարունակութեամբ, ու-
սանայ և թրքահայ նշանաւոր գրողներու
գործերէն քաղուած, և կենսագրական ըն-
դարձակ ծանօթութիւններով ճոխացած է:
Պիտի բաղկանայ երկու ստուար հատոր-
ներէ: Հրատարակուած է Ա. հատորը՝ 450
երեսէ բաղկացած: Գին՝ քարդօն կազմ և
թղթակազմ՝ 10 դրուշ, լաթակազմ 12¹/₂,
փառակազմ 15, ամենաշքեղ կազմ (նուէրի
համար) 20 դրուշ: Կեդրոնատեղի Ա. Պի-
պեռնանի գրատուն, Պապը Ալի ճատտէսի,
թիւ 12: 3—2

ՀՄԱՅԵԱԿ ԲԱՀԱՆԱՅ ԷՔՍԵՐՃԵԱՆ
ՏԱՐԵՐՔ ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵՁՈՒԻ

Ա. Բ. Գ. հատոր

30 գեղջ

Կեդրոնատեղի՝ Սիւմպիւլիւ խան Փափազ-
եան գրատուն:

ԴՊՐՈՑԱԾԵՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ

ԳԻՇԵՐՈՅԻԿ ԵՒ ՑԵՐԵԿԵԱՅ

ԳՈՒՄ-ԳԱՐՈՒ

Վարժարանիս ուսումնական տարեշը-
ջանը կը սկսի Սեպտ. 1 Դշ. օր. աշակեր-
տաց արձանագրութիւնք պիտի կատարուին
Օգոստ. 12էն սկսեալ ամէն Բշ. և Ուր.
օրեր, առաւօտէն մինչև ժամը 9 (Ը. Թ.):

Այս տարի վարժարանին ընդհանուր
գաստիարակութեան պաշտօնը և Ֆրանս.
բրաթիքի ճիւղը յանձնուած է Տիկ. Սա-
րուխանի. ուսուցչական մարմնոյ մէջ ալ
կարեւոր փոփոխութիւնք տեղի ունեցած
են, նաև Կրթական Յանձնախումբ մը
կազմուած է որ Գործ. Ժողովիս պիտի ա-

ջակցի վարժարանի վարչական գործերուն
մէջ: Սոյն յանձնախումբին անդամներն են.
Տեարք Գալուստ Մալաթեան, Գարեգին
Դավաթեան, Միհրան Յովհաննէսեան,
Յովհաննէս Հինգլեան և ընդհանուր գաս-
տիարակուհին:

Գիշերօթիկներուն տարեթոյակն է 20
ոսկի Օսմանեան, իսկ ցերեկեաններունը՝
ամսական 30—40 դրշ. մուտք 20 դրշ.:

Մանրամասնութեանց, ինչպէս նաև
աշակերտաց արձանագրութեան համար դի-
մել վարժարան՝ ընդհանուր գաստիարակու-
հին, որոշեալ օրերուն մէջ:

Զրիավարժ գիշերօթիկներուն թիւը ը-
րացած ըլլալով՝ ո և է դիմում անհետե-
ւանք պիտի մնայ, իսկ որոշ թուով ցե-
րեկեայ նոր ձրիավարժներ պիտի ընդուն-
ուին մրցման քննութեամբ: 2—1

ԱՂՋԿԱՆՑ ԱՄԵՐԿ. ԳՈՒԷՃ, ԻԻՍԿԻԻՏԱՐ

Իւսկիւտարի Աղջկանց Ամերկ. Գոլէճին
յառաջիկայ տարեշըջանը կը սկսի Սեպտ.
14ին (Ն. Տ.) կէսօրէն ետքը: Գոլէճը Ար-
ուեստից, Գիսութեան, Լեզուներու և Երա-
ժըշտութեան մէջ զարգացման դիւրութիւն-
ներ և խնամոտ բարոյական կրթութիւն
մը կը հայթայթէ իր ուսանողներուն:

Նախակրթարանի մասը նոյնպէս պիտի
բացուի Սեպտ. 14ին կէսօրէն ետքը.
վարժարանին Արնավուտգիւղի ծովեզերեայ
կալուածին շէնքին մէջ, որուն կից բնա-
կարանի մը մէջ պիտի ըլլան նոյն բաժնին
տեսուչ Տր. և Տիկին Ուիլիւմ Ս. Մուրէյ:
Այս վարժարանը աշակերտները կը պատ-
րաստէ ուղղակի Գոլէճ մտնելու: Նախա-
կրթարանի բաժնին մէջ 10 տարեկանէն
վար ոչ մէկ աղջիկ պիտի ընդունուի իբրեւ
գիշերօթիկ: Թէ՛ Գոլէճի, թէ՛ նախակր-
թարանի համար նամակով դիմումներ կա-
րելի է ընել Գոլէճին Տնօրինուհիին, Տր.
Փաթրիքի: Շնորհիւ Անգղ. նամակատան,
կամ Սեպտ. 1էն (Ն. Տ.) ետքը Գոլէճի
կամ նախակրթարանի շէնքերը անձամբ
դիմելով Տնօրինուհիին: 2—2

